Իլֆ եւ Պետրով
թարգմանիչ՝ Արտաշես Քալանթարյան

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՏԵՂԸ

Այս պատմվածքը Նստասերյանի կյանքից վերցրած մի դառը փաստի մասին է։

Դժբախտությունը տեղի ունեցավ ո՛չ այն պատճառով, որ Նստասերյանը հիմար էր: Ո՛չ, ավելի շուտ նա խելոք էր: Պարզապես տեղի ունեցավ այն, ինչ արդեն եղել է ժողովուրդների և անհատ անձնավորությունների պատմության մեջ՝ խելքից պատուհաս: Գործը վերաբերում է երկաթուղով ճանապարհորդություն կատարելուն:

Նստասերյանի ջանքերի վերջնական նպատակը ահա թե ինչն էր. սեպտեմբերի 13-ին թողնել Մոսկվան, որպեսզի երկու օր անց ժամանի Եյսկ՝ Ազովի ծովում բուժիչ լողանք ընդունելու: Ամեն ինչ լավ դասավորվեց՝ ուղեգիրը, արձակուրդը, ընտանեկան գործերը: Բայց ահա երկաթուղու հարցը: Մինչև մեկնելը մնացել է ընդամենը երկու ամիս, իսկ տոմս դեռ չկա:

«Հույժ շտապ միջոցներ ձեռնարկելու ժամանակն է,— որոշեց Նստասերյանը: — Քաղաքային կայան, ես, իհարկե, չեմ դնա: Գնամ ի՞նչ անեմ, այնտեղ տոմս ձեռք բերել չի լինի: Ասում են այնտեղ տոմսարկղներում ոչ թե տոմս են վաճառում, այլ մաղձափոշի և խաղաքարտեր: Ո՛չ, ո՛չ, տոմսը պետք է այլ կերպ ճարել»:

Հենց այդ «այլ կերպն» էլ խլեց վերոհիշյալ երկու ամիսը:

— Թե ինձ սիրում եք,— ասում էր Նստասերյանը յուրաքանչյուր ծանոթի,— ինձ համար մի տոմս ձեռք բերեք Եյսկ գնալու համար՝ կոշտ վագոնում, պառկելու...

— Իսկ կանգնելու չէի՞ք ուզի,— թեթևամտորեն հարցնում էին ծանոթները:

— Թողնե՛նք կատակները,— վշտանում էր Նստասերյանը,— մարդ ուզում է Եյսկ գնալ կազդուրվելու, իսկ դուք... Ուրեմն չմոռանաք: Տասներեքի համար: Ձեզ հավանաբար ծանոթներ կունենաք, որոնք կարող են: Դե, չէ՛, դուք հենց այնպես մի խոստացեք, գրեցեք ծոցատետրում, թե ինձ սիրում եք:

Բայց բոլոր այս միջոցառումները նրան չէին հանգստացնում, այսպես ասած՝ լրիվ երաշխիք չէին: Նստասերյանը մրցակիցներից էր վախենում: Բոլոր անցուդարձ անողները նրան կասկածելիորեն ապագա ուղևորներ էին թվում: Եվ իսկապես, համարյա բոլոր անցորդները մի տեսակ նյարդայնացած՝ այս ու այն կողմ էին նայում, ասես միայն մի րոպեով էին հեռացել երկաթուղու տոմսի հերթից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Վատ է, վատ,— մտածում էր Նստասերյանը,— հարկավոր է ավելի վճռական գործել: Ծրագիր է պետք»:

Մի ամբողջ երեկո Նստասերյանը զբաղված էր սխեմա կազմելով: Եթե նրան այդ ժամանակ բռնեին, ապա անկասկած կկարծեին, թե ընդհատակյա մի խոշոր կազմակերպության գլուխ է կանգնած Նստասերյանը և զբաղված է կամ երկաթուղային կամուրջ պայթեցնելու, կամ էլ ազատ վաճառքի խանութներից խոշոր հափշտակություն կատարելու նախապատրաստությամբ:

Թղթի վրա պատկերված էին շրջանակներ, քառակուսիներ, կետ-գծեր, լիտերներ, թվեր և ազգանուններ: Սխեմայով կարելի էր ուսումնասիրել առնվազն հարյուր մարդու կյանքն ու գործունեությունը. ովքե՞ր են նրանք, որտե՞ղ են ապրում, որտե՞ղ են աշխատում, ի՞նչ բնավորություն ունեն և ինչ թուլություններ, ու՞մ հետ են ընկերություն անում և ում չեն համակրում: Կուսակցականների ազգանունների դիմաց խաչեր էին դրված. անկուսակցականները բավարարված էին զրոներով: Սրանից բացի, փաստաթղթի վրա հիշատակված էին բավականին տարօրինակ բնութագրեր:

«Ազդեցիկյան: Անպայման կարող է»:

«Գոռոզունի: Կարող է, բայց հազիվ թե ուզենա»:

«Մատիկյան-Տոտիկյան: Կուզենա, բայց հազիվ թե կարողանա»:

«Կատվատերյան: Կարող է, բայց սրիկա է»:

Եվ այս բոլորը հանգում էին մի բանի, ձեռք բերել կոշտ տեղ՝ պառկելու համար:

«Հո որևէ մեկը կկտցի,— երազում էր Նստասերյանը,— գլխավորն այն է, որ ոչ մի որպե հանգիստ չտամ: Ախր նրանք բոլորն էլ ռենեգատներ են ու դավաճաններ, խոսք են տալիս, իսկ հետո ոչինչ չեն անում»:

Որքան ավելի էր մոտենում մեկնման օրը, այնքան ավելի մոլեգին էր դառնում Նստասերյանի գործունեությունը: Այն արդեն սկսում էր սպառնալ քաղաքի հանգստին: Մարդիկ թաքնվում էին նրանից, բայց նա անխոնջ հետապնդում էր նրանց: Նա սլանում էր նրանց ետևից արագընթաց վերելակներով: Նա անթիվ հեռախոսականչերով լրիվ ծանրաբեռնել էր սովորական և ավտոմատ կայանները:

— Կարելի՞ է ընկեր Մատիկյանին: Այո, Տոտիկյանին: Այո, այո, Մատիկյան-Տոտիկյանին: Ընկեր Մատիկյա՞ն: Բարև ձեզ, ընկեր Տոտիկյան: Ոչ, Լեյլան չէ, ես եմ, Նստասերյանը: Ընկեր Մատիկյան, չէ՞ որ ինձ խոսք եք տվել: Դե, իհարկե, դեպի Եյսկ՝ պառկելու համար: Ո՞նց թե ժամանակ չունեք: Այդ դեպքում ես ձեզ մոտ կգամ տաքսիով: Պետք չէ՞: Իսկ դուք իսկապե՞ս ինձ չեք խաբի: Դե, ներեցեք մեծահոգաբար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նկատելով իրեն անհրաժեշտ որևէ մարդու, Նստասերյանը արհամարհելով վտանգը, իրեն նետում էր փողոցային շարժման ամենախիտ տեղն անգամ: Ճռնչում էին ավտոմեքենաների արգելակները, գունատվում էին վարորդները: ուրեմն չե՞ք մոռանա,— համոզում էր Նստասերյանը սալահատակի մեջտեղում կանգնած,— դեպի Եյսկ, պառկելու համար: Մի կոշտ տեղ:

Երբ փողոցային երթևեկության կանոնները խախտելու համար նրան միլիցիայի բաժանմունք էին տանում, նա իրեն չկորցրեց և միլիցիոներին ստիպեց երդվել, որ իր համար մի տոմս ձեռք կբերի:

— Դուք միլիցիա եք, դուք ամեն ինչ կարող եք,— ասում էր նա աղերսանքով:

Եվ միլիցիոների ազգանունը՝ համապատասխան շրջանակով և բնութագրով («Կարող է, բայց անկայուն է») հայտնվեց ահավոր սխեմայում:

... Մեկնումից մի շաբաթ առաջ Նստասերյանին ներկայացավ բոլորովին անհայտ մի քաղաքացի և նրան հանձնեց մի տոմս՝ Եյսկ գնալու համար: Նրա երջանկությանը չափ չկար: Նստասերյանը գրկեց քաղաքացուն, համբուրեց նրա շրթունքները, բայց այնպես էլ չհիշեց դեմքը (այնքա՜ն մարդկանց էր խնդրել տոմսի համար, որ բոլորին հիշելը միանգամայն անհնար էր):

Նույն օրը մոտոցիկլետով եկավ նաև Մատիկյան-Տոտիկյանի սուրհանդակը և Եյսկի տոմս բերեց: Նստասերյանը շնորհակալություն հայտնեց, բայց դրամը վճարեց խռոված հոգով:

«Մի տոմսը կայարանում կվաճառեմ»,— որոշեց նա:

Օ՜, իզո՜ւր, իզո՜ւր Նստասերյանը մարդկությանը չէր հավատում:

Սխեման գործում էր անխափան, ինչպես լավ յուղած մաուզերը՝ պարունակ-պարունակի ետևից դատարկելով:

Մեկնելուց մեկ օր առաջ Նստասերյանն արդեն ուներ երեսունութ տոմս (կոշտ, պառկելու համար): Տոմսերի արժեքը վճարելու վրա ծախսվեց արձակուրդային ողջ գումարը և դեռ վաթսունյոթ կոպեկի էլ տորգսինի վարկանիշ:

Ի՜նչ ստորություն: Ոչ մեկը ռենեգատ կամ դավաճան չգտնվեց:

Իսկ տոմսերը շարունակում էին հավաքվել: Նստասերյանն արդեն թաքնվում էր, բայց նրան գտնում էին: Տոմսերի թիվը հասավ քառասունչորսի:

Գնացքը շարժվելուց մեկ ժամ առաջ Նստասերյանը կանգնած էր կայարանի գրանիտե սրահում և որակավորում չունեցող մուրացկանի անհամարձակ ձայնով համոզում էր անցորդներին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Եյսկ գնալու տոմսակ գնեցեք: Եյսկը բուժիչ վայր է: Չեք զղջա:

Բայց գնորդներ չկային: Բոլորն էլ հիանալի գիտեին, որ կայարանում տոմս չես ճարի և որ պետք է գործել ծանոթների միջոցով: Փոխարենը պետական մեքենաներով եկան Ազդեցիկյանը, Թղթատերյանը և Կատվատերյանը: Նրանք նոր տոմսեր էին բերել: Նստասերյանը ճանապարհին ձանձրանում էր: Վագոնում միայն ինքն էր:

Եվ որ գլխավորն է, դժբախտությունը տեղի ունեցավ ո՛չ այն պատճառով, որ Նստասերյանը հիմար էր: Ո՛չ, ավելի շուտ նա խելոք էր: Պարզապես նրա ծանոթները շատ էին ազդեցիկ, իսկ տոմսը դրամարկղից գնելու հիանալի կարգը չգիտես ինչու մոռացվել էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԵՃ՝ ԹԵՅԻ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋԸ

հեղինակ՝ Իլֆ եւ Պետրով
թարգմանիչ՝ Արտաշես Քալանթարյան
աղբյուր՝ «Վերջին հանդիպում»
Ընտանիքում երեքն էին՝ հայրը, մայրը եւ որդին:

Հայրը հին բոլշեվիկ էր, մայրը՝ հին տնային տնտեսուհի, իսկ որդին հին պիոներ էր՝ խուզած գլխով եւ տասներկուսամյա կենսափորձով:

Թվում էր, թե ամեն ինչ լավ է:

Սակայն, որքան էլ տարօրինակ թվա, առավոտները թեյի ժամանակ ընտանեկան վեճեր էին լինում:

Խոսակցությունը սովորաբար սկսում էր հայրը:

— Հը՞, ի՞նչ նորություն կա ձեր դասարանում,— հարցնում էր նա:

— Ոչ թե դասարանում, այլ խմբում,— պատասխանում էր որդին,— ինչքան եմ քեզ ասել, հայրի՛կ, որ դասարանը ռեակցիոն-ֆեոդալական հասկացողություն է:

— Լավ, լավ, թող լինի խումբ: Ի՞նչ եք սովորել ձեր խմբում:

— Չենք սովորել, այլ մշակել ենք: Ժամանակն է, որ իմանաք:

— Դե, լա՛վ, ի՞նչ եք մշակել:

— Մշակել ենք «Լասալականության ազդեցությունը ռեֆորմիզմի սկզբնավորման վրա» հարցերը:

— Ահա թե ի՜նչ: Լասալականությո՞ւն: Իսկ խնդիրներ վճռե՞լ եք:

— Վճռել ենք:

— Այ, ապրեք, ի՞նչ խնդիրներ եք վճռել: Երեւի դժվա՞ր:

— Չէ, ո՛չ այնքան: Մատերիալիստական փիլիսոփայության խնդիրները Կոմակադեմիայի երկրորդ սեսիայի եւ ագրարնիկ-մարքսիստների պլենումի համատեղ առաջադրած խնդիրների լույսի տակ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հայրը թեյի բաժակը մի կողմի հրեց, բաճկոնի փեշով սրփեց ակնոցը եւ ուշադիր նայեց որդուն: Չէ՛, ատրաքնապես կարծես թե ոչինչ: Տղա է, է՛լի:

— Իսկ ռուսաց լեզվից հիմա ի՞նչ եք սո... այսինքն՝ մշակում:

— Վերջին անգամ կոլեկտիվ ընթերցեցինք «Բռնենք սիրուն սազը, գոցենք ձիու մազը» պոեմը:

— Ձիո՞ւ մասին,— հուսադրված հարցրեց հայրը, - «Ինչո՞ւ այդպես գլխիկոր խրխնջում ես իմ խենթ ձի, էլ չես կրծում սանձը քո...»

— Ձիու մազի՛ մասին,— չոր պատասպանեց տղան:— Միթե չե՞ս լսել.

«Հեյ, տղերք, դաշտ դուրս եկեք
Ու հասուն ձիեր բռնեք:
Թռի՛ր իմ երգ,
Հնչիր իմ սազ,
Թանկ է, պոկե՛նք
Շատ ձիու մազ:

— Առաջին անգամն եմ լսում այդպիսի...ը՛մմ, տարօրինակ պոեմ,— ասաց հայրը,— ո՞վ է գրել:

— Արկադի Պարովոյը:

— Երեւի փոքրիկ տղա է: Ձեր խմբի՞ց է:

— Ի՞նչ տղա... ամոթ է քեզ, հայրի՛կ: Հին էլ բոլշեւիկ ես ու Պարովոյին չես ճանաչում: Դա նշանակավոր բանաստեղծ է: Մենք վերջերս նույնիսկ շարադրություն գրեցինք. «Պարովոյի ստեղծագործության ազդեցությունը արեւմուտքի գրականության վրա»:

— Իսկ քեզ չի՞ թվում,— զգուշությամբ հարցրեց հայրը,— որ այդ ընկեր Պարովոյի ստեղծագործության մեջ ինչ-որ քիչ է բանաստեղծական զգացողությունը:

— Ինչո՞ւ է քիչ: Բավականին պարզ արտահայտված են ձիուն ոչ անհրաժեշտ մազի հավաքման եւ այն ներքնակի արդյունաբերության մեջ օգտագործելու հարցերը:

— Ոչ անհրաժե՞շտ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Բացարձակապես անպետք:

— Իսկ ձիերի ականջները մտադիր չե՞ք հավաքել,— դողացող ձայնով բղավեց հայրը:

— Կերեք, կերեք,— հաշտեցնող ձայնով ասաց մայրը,— շարունակ վիճում եք:

Հայրը երկար ժամանակ զայրացած էր, թոթվում էր ուսերը ու ինչ-որ խոսքեր քրթմնջում քթի տակ: Հետո հավաքեց ուժերը եւ կրկին դիմեց իր հանելուկային որդուն:

— Դե, իսկ ինչպե՞ս եք հանգստանում, զվարճանում: Ինչո՞վ էիք զվարճանում վերջին ժամանակներս:

— Մենք չէինք զվաճրանում, ժամանակ չունեինք:

— Իսկ ի՞նչ էիք անում:

— Մենք գոտեմարտում, պայքարում էինք:

Հայրը աշխուժացավ:

— Ա՛յ, դա ինձ դուր է գալիս: Հիշում եմ, ես էլ էի փոքր ժամանակ հրապուրվել: Բրարլե, տուրդե-տետ, գլխից բռնելը՝ պարտերում: Դա շատ օգտակար է: Հիանալի բան է ֆրանսիական գոտեմարտը:

— Իսկ ինչո՞ւ ֆրանսիական:

— Համա ինչպիսի՞ն:

— Սովորական գոտեմարդը: Սկզբունքային:

— Իսկ ո՞ւմ դեմ էիք գոտեմարտում,— հարցրեց հայրը ընկճված ձայնով:

— Լեբեդեւականության:

— Այդ ի՞նչ լեբեդեւականություն է: Ո՞վ է այդ Լեբեդեւը:

— Մեր տղաներից մեկը:

— Իսկ նա ի՞նչ է, վա՞տ վարք ունի: Չարաճճի՞ է:

— Սարսափելի վարք ունի, հա՛յր: Նա կրկնեց դեբորինյան մի շարք սխալներ մախիզմի, մախաեւականության եւ մեխանիկականության գնահատման հարցում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Սա ինչ-որ մղձավանջ է:

— Իհարկե, մղձավանջ է: Մենք արդեն երկու շաբաթ է, ինչ դրանով ենք զբաղված: Ամբողջ ուժով պայքարում ենք: Երեկ կազմակերպեցինք քաղհավաք:

Հայրը բռնեց գլուխը:

— Քանի՞ տարեկան է:

— Ո՞վ, Լե՞բեդեւը՞, ջահել չէ, արդեն ութ տարեկան է:

— Տղան ութ տարեկան է, իսկ դուք պայքարո՞ւմ եք նրա դեմ:

— Իսկ քո կարծիքով ի՞նչ անենք: Օպորտունի՞զմ ցուցաբերենք: Սքողե՞նք հարցը:

Հայրը դողացող ձեռքերով ճանկեց պայուսակը եւ ճանապարհին աթոռը շրջելով փողոց դուրս թռավ: Անխոցելի տղան ներողամտորեն քմծիծաղ տվեց եւ բղավեց նրա ետեւից:

— Եվ դեռ հին բոլշեւի՛կ է:

Մի անգամ դժբախտ հայրը բացեց լրագիրը եւ հաղթական ճիչ արձակեց: Մայրցը ցնցվեց: Որդին ամոթահար նայեց իր բաժակին: Նա արդեն կարդացել էր Կենտկոմի որոշումը դպրոցի մասին: Նրա ականջները վարդագույն էին դարձել եւ թափանցիկ, ինչպես ճագարներինը:

— Դե,— ասաց հայրը տարօրինակ ժպիտով,— հիմա ի՞նչ կասես, չորրորդ դասարանի աշակերտ Նիկոլայ Սիտնիկով:

Որդին լուռ էր:

— Երեկ ի՞նչ եք կոլեկտիվ մշակել:

Որդին շարունակում էր լռել:

— Վերջացրի՞ք վերջապես լեբեդեւականությունը, անհաշտ պատանի ուղղափառներ:

Լռություն:

Խեղճ տղան արդեն ընդունե՞լ է իր գերդեբորինյան սխալները: Իմիջայլոց, ո՞ր դասարանում է սովորում նա:

— Զրո խմբում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ոչ թե զրո խմբում, այլ նախապատրաստական դասարանում որոտաց հայրը,— ժամանակն է գիտենալ:

Որդին լուռ էր:

— Երեկ կարդացի, որ ձեր այդ Արկադի, ոնց է՞ր, հա՛, Պարավոզովին չեն ընդունել Գրողների միություն: Ինչպես էր գրո՞ւմ... «Հե՛յ տղերք, դաշտ դուրս եկեք, ձիու մազը պոչից պոկե՛ք»:

— «Թանկ է, պոկենք շատ ձիու մազ»— աղերսանքով շշնջաց տղան:

— Այո՛, այո՛: Մի խոսքով, «Հորդի՛ր, ծառս եղիր, դու ձիու ձայն»: Ես ամեն ինչ հիշում եմ: Եվ նա՞ է ազդեցություն թողնում համաշխարհային գրականության վրա:

— Չը... չգիտեմ:

— Չգիտե՞ս: Մի՛ ծամիր, երբ ուսուցչի հետ ես խոսում: Ո՞վ է գրել «Մեռած հոգիները»: Այդ է՞լ չգիտես: Գոգոլն է գրել, Գոգոլը:

— Վերջնականապես քայքայված եւ հետադիմորեն տրամադրված մանր միստիկ է...— տղան ուրախացած կրկնեց անգիր արածը:

— Երկուսից հանած,— վրիժառությամբ ասաց հայրը,— հարկավոր է կարդալ Գոգոլին,— հարկավոր է սովորել Գոգոլ, իսկ մշակել կարող ես Կոմակադեմիայում մի տասը տարի հետո: Դե... պատմիր, խնդրեմ, Սիտնիկով Նիկոլայ, Նյու-Յորքի մասին:

— Այնտեղ ավելի խիստ, քան որեւէ տեղ,— երգեց Կոլյան,— արտահայտվում են կապիտալիստական հակասու...

— Այդ ես ինքս գիտեմ: Դու ինձ ասա ո՞ր օվկիանոսի ափին է Նյու-Յորքը:

Որդին լուռ էր:

— Որքա՞ն բնակչություն ունի:

— Չգիտեմ:

— Որտեղո՞վ է հոսում Օրինոկո գետը:

— Չգիտեմ:

— Ո՞վ է Եկատերինա Երկրորդը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Արդյունք:

— Ինչպե՞ս թե արդյունք:

— Ես հիմա կհիշեմ, մենք մշակել էինք: Ահա՞. առեւտրական կապիտալի աճող ազդեցության ժամանակաշրջանի արդյունք:

— Դու ինձ ասա ո՞վ էր նա: Ի՞նչ պաշտոն ուներ:

— Մենք դա չենք մշակել:

— Ախ, այդպե՞ս... իսկ ո՞ր թվերն են բաժանվում երեքի վրա...

— Դուք կերեք, կերեք— սրտացավությամբ ասաց մայրը,— շարունակ վիճում եք:

—Չէ՛, թող նա ինձ ասի, թե ի՞նչ բան է թերակղզին,— բորբոքվում էր հայրը,— թող ասի, թե ի՞նչ բան է Կուրո-Սիվոն, թող ասի, թե ինչի արդյունքն էր Հենրիխ Թռչնորսը:

Հանելուկային տղան պոկվեց տեղից, դողացող ձեռքերով պարսատիկը դրեց գրպանը եւ վազեց փողոց:

— Մնացակա՛ն,— բղավեց նրա ետեւից երջանիկ հայրը,— բոլորը դիրեկտորիդ կասեմ:

Նա վերջապես ռեւանշ վերցրեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԻՆՉՊԵՍ ՀՈՐԻՆՎԵՑ ՌՈԲԻՆԶՈՆԸ

«Արկածային գործ» պատկերազարդ երկտասնօրյա հանդեսի խմբագրությունում երիտասարդ ընթերցողի ուշադրությունը գամելու ընդունակ գեղարվեստական ստեղծագործությունների պակաս էր զգացվում:

Կային, իհարկե, ինչ-որ գործեր, բայց դրանք բոլորն էլ այն չէին: Դրանցում չափից դուրս շատ էր ջրիկ լրջությունը եւ, եթե ճիշտն ասենք, դրանք միայն մթագնում էին երիտասարդ ընթերցողի հոգին, չէին գամում: Իսկ խմբագիրը ուզում էր անպայման գամել:

Ի վերջո որոշեցին շարունակելի վեպ պատվիրել:

Խմբագրության սուրհանդակը ծանուցագիրը ձեռքին սլացավ գրող Մոլդավանցեւի մոտ, եւ արդեն հաջորդ օրը Մոլդավանեւը նստած էր խմբագրի առանձնասենյակում, վաճառականի բազմոցին:

— Հասկանո՞ւմ եք,— բացատրում էր խմբագիրը,— դա պետք է լինի գրավիչ, թարմ, հետաքրքրքիր, արկածներով լի: Պարզ ասած՝ պետք է լինի սովետական Ռոբինզոն Կրուզո: Այնպես, որ ընթերցողը չկարողանա կտրվել:

— Ռոբինզոն... Կարելի է,— կարճ պատասխանեց գրողը:

— Միայն ո՛չ թե պարզապես ոբինզոն, այլ սովետակա՛ն Ռոբինզոն:

— Ուրիշ էլ ինչպիսի՞ն, հո ռումինական չպիտի՞ լինի:

Գրողը երկար խոսել չէր սիրում: Իսկույն երեւում էր, որ գործի մարդ է:

Եվ իսկապես, վեպը որոշված ժամկետին պատրաստ էր: Մոլդավանցեւը մեծ բնագրից այնքան էլ չէր շեղվել: Ռոբինզոն, ուրեմն Ռոբինզոն:... Սովետական պատանին նավաբեկության է ենթարկվում: Ալիքը դուրս է բերում նրան մի անմարդաբնակ կղզի: Նա միայնակ է, անօգնական, հսկա բնության դեմ-հանդիման, նրան շրջապատում են զանազան վտանգներ՝ գազաններ, բաղեղներ, առաջիկա անձրեւային շրջանը: Բայց սովետական Ռոբինզոնը, ավյունով լի, հաղթահարում է անհաղթահարելի թվացող բոլոր խոչընդոտները: Իսկ երեք տարի անց սովետական արշավախումբը հայտնաբերում է նրան, հայտնաբերում է ուժերի ծաղկման շրջանում: Նա հաղթել է բնությունը, տուն է կառուցել, այն շրջապատել բանջարանոցների կանաչ օղակով, ճագարներ է աճեցրել, իր համար կապիկների պոչերից բլուզ է կարել, եւ թութակին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

սովորեցրել առավոտներն արթնացնել իրեն. «Ուշադրությո՛ւն, դե՛ն նետեք վերմակը, դեն նետեք վերմակը: Սկսում ենք առավոտյան մարմնամարզությունը» բառերով:

— Շա՛տ լավ է,— ասաց խմբագիրը,— իսկ ճագարների մասին ուղղակի հոյակապ է: Լիովին ժամանակակից թեմա: Բայց, գիտե՞ք, ստեղծագործության հիմնական միտքը ինձ այնքան էլ պարզ չէ:

— Մարդու պայքարը բնության դեմ,— սովորական հակիրճությամբ հայտնեց Մոլդավանցեւը:

— Այո, բայց սովետական ոչինչ չկա:

— Հապա թութա՞կը: Չէ՞ որ նա ռադիոյին է փոխարինում: Փորձված հաղորդիչ է:

— Թութա՞կը... իսկապես լավ է: Եվ բանջարանոցների օղակն էլ լավ է: Բայց չի զգացվում սովետական հասարակայնությունը: Որտե՞ղ է, օրինակ, տեղկոմը: Որտե՞ղ է արհմիության ղեկավար դերը:

Մոլդավանցեւը հանկարծ հուզվեց: Հենց որ զգաց, թե վեպը կարող են չընդունել, նրա լռակյացությունը վայրկենապես չքվեց: Նա դարձավ պերճախոս:

— Այնտեղ ի՞նչ տեղկոմ: Չէ՞ որ կղզին անմարդաբնակ է:

— Այո, միանգամայն իրավացի եք, անմարդաբնակ է: Բայց տեղկոմ պետք է լինի: Ես խոսքի վարպետ չեմ, բայց եթե ձեր տեղը լինեի, կստեղծեի որպես սովետական տարր:

— Բայց ախր ողջ սյուժեն կառուցված է այն հաշվով, որ կղզին անմարդա....

Այստեղ Մոլդավանցեւը պատահականորեն նայեց խմբագրի աչքերին եւ կակազեց: Այդ աչքերն այնքան գարնանային էին, նրանք մեջ այնպես էր զգացվում մարյան դատարկությունն ու կապույտը, որ նա որոշեց զիջումներ անել:

— Դուք իսկապես ճիշտ եք ասում, —ասաց նա՝ բարձրացնելով մատը, — իհարկե: Եվ ինչպե՞ս ես միանգամից գլխի չընկա: Նավաբեկությունից փրկվում են երկուսը՝ մեր Ռոբինզոնը եւ տեղկոմի նախագահը:

— Եվ էլի երկու ազատված անդամ, սառը ասաց խմբագիրը:

— Օ՛յ,— ճչաց Մոլդավանցեւը:

— Ոչ մի օ՛յ, երկու ազատված անդամ եւ մեկ ակտիվիստուհի՝ անդամավճարները հավաքողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Անդամավճարներ հավաքո՞ղն ինչի համար է: Ու՞մից պետք է նա անդամավճար հավաքի:

— Հենց Ռոբինզոնից:

— Ռոբինզոնից անդամավճար կարող է հավաքել նախագահը: Դրանից նա շատ էլ նեղություն չի քաշի:

— Ա՛յ, հենց այդեղ դուք սխալվում եք, ընկեր Մոլդավանցեւ: Դա բացարձակապես անթույլատրելի է: Տեղկոմի նախագահը չպետք է ուժերը ջլատի մանր-մունր գործերի վրա եւ վազի անդամավճար հավաքելու: Մենք դրա դեմ ենք պայքարում: Նա պետք է լուրջ ղեկավար աշխատանքով զբաղվի:

— Այդ դեպքում թող անդամավճարներ հավաքող էլ լինի,— հնազանդվեց Մոլդավանցեւը,— դա նույնիսկ լավ է: Նա կամուսնանա տեղկոմի նախագահի կամ էլ հենց Ռոբինզոնի հետ: Համենայն դեպս, ավելի հաճելի կլինի կարդալը:

— Չարժե: Մի՛ գլորվեք դեպի բուլվարայնություն, դեպի անառողջ էրոտիկա: Թող նա իր համար հավաքի անդամավճարները եւ պահի չհրկիզվող պահարանի մեջ:

Մոլդավանցեւը վեր-վեր թռավ բազմոցի վրա:

— Ներեցեք, անմարաբնակ կղզում չհրկիզվող պահարան չի կարող լինել:

Խմբագիրը մտածմունքի մեջ ընկավ.

— Սպասեք, սպասեք,— ասաց նա,,— ձեր գրքի առաջին գլխում հրաշալի տեղ կա: Ռոբինզոնի եւ տեղկոմի անդամների հետ միասին ալիքը ափ է նետում զանազան իրեր:

— Կացին, հրացան, կողմնացույց, մի տակառ ռոմ եւ հակալնդախտային հեղուկով լի մի սրվակ,— հանդիսավորությամբ թվեց գրողը:

— Ռոմը ջնջեք,— արագորեն ասաց խմբագիրը, եւ հետո այդ ի՞նչ հակալնդախտային հեղուկ է: Ո՞ւմ է հարկավոր: Ավելի լավ է մի շիշ թանաք: Եվ անպայման չհրկիզվող պահարան:

— Լավ, բայց ինչի՞ համար է այդ պահարանը:

Անդամավճարները կարելի է հիանալի պահել պառբաբի փչակում: Ո՞վ պետք է գողանա:
— Ինչպե՞ս թե ով: Իսկ Ռոբինզո՞նը, իսկ տեղկոմի նախագա՞հը, իսկ ազատված անդամնե՞րը, իսկ վերստուգիչ հանձնաժողո՞վը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Մի՞թե նրանք էլ են փրկվել,— եկրչոտությամբ հարցրեց Մոլդավանցեւը:

— Փրկվել են:

Լռություն տիրեց:

— Գուցե ալիքը ափ է նետել նաեւ նիստերի սեղա՞նը,— չարախնդորեն հարցրեց հեղինակը:

— Ան-պա՛յ-մա՛ն: Մարդկանց համար աշխատանքի պայմաններ ստեղծել պե՞տք է, թե ոչ: Ուրեմն թող լինի ջրաման, զանգ, սփռոց: Ալիքը թող ափ նետի ինչպիսի սփռոց ուզում է: Թող կարմիր գույնի լինի, թող կանաչ լինի: Ես գեղարվեստական ստեղծագործությունը չեմ ճնշում: Բայց ահա թե ինչ, աղավնյակս, ձեր առաջնահերթ խնդիրը պետք է լինի մասսաներին պատկերելը: Ա՛խատավորական լայն զանգվածները:

— Ալիքը չի կարող մասսաներ նետել ափ,— համառեց Մոլդավանցեւը,— դա սյուժեին հակառակ կլինի: Մտածեցեք: Ալիքը հանկարծ ափ է նետում մի քանի տասնյակ հազար մարդ: Հավերի ծիծաղն էլ կգա:

— Իմիջիայլոց, առողջ, առույգ, կենսախինդ ծիծաղի ոչ մեծ քանակությունը երբեք չի խանգարի,— ավելացրեց խմբագիրը:

— Ո՛չ, ալիքը չի կարող այդ բանն անել:

— Իսկ ինչո՞ւ ալիքը,— զարմացավ հանկարծ խմբագիրը:

— Բա էլ ուրիշ ի՞նչ կերպ կարող են մասսաները կղզի ընկնել: Կղզին անմարդաբնակ է, չէ՞:

— Իսկ ձեզ ո՞վ ասաց, թե անմարդաբնակ է: Դուք ինձ շփոթեցնում եք: Ամեն ինչ պարզ է: Գոյություն ունի կղզի, նույնիսկ թերակղզի: Դա ավելի լավ է, այդպես հանգիստ կլինի: Եվ այնտեղ տեղի են ունենում մի շարք գրավիչ, թարմ, հետաքրքիր արկածներ: Ահմիութենական աշխատանք է կատարվում, երբեմն ոչ բավարար: Ակտիվիստուհին բացահայտում է մի շարք թերություններ, ասենք թեկուզ անդամավճարների հավաքման ասպարեզում, նրան օգնում են լայն զանգվածները: Եվ ահա քեզ զղջացող նախագահ: Վերջում կարելի է տալ ընդհանուր ժողով: Շատ պատկերավոր կստացվի հենց գեղարվեստական առումով: Ահա եւ բոլորը:

— Իսկ Ռոբինզո՞նը,— թոթովեց Մոլդավանցեւը:

— Այո, լավ էր, որ հիշեցրիք: Ռոբինզոնն ինձ վրդովում է: Նրան ամբողջովին դեն նետեք: Նվնվացողի անհեթեթ, ոչնչով չարդարացված կերպար է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Հիմա ամեն ինչ հասկանալի է,— ասաց Մոլդավանցեւը՝ գերեզմանային ձայնով,— վաղը պատրաստ կլինի:

— Դե, հաջողությո՛ւն: Ստեղծագործեցե՛ք: Հա, իմիջիայլոց, ձեր վեպի սկզբում նավաբեկություն է կատարվում: Գիտե՞ք ինչ, նավաբեկություն պետք չէ: Թող առանց նավաբեկության լինի: Այդպես ավելի գրավիչ կլինի: Դե, ահա, լավ է: Ողջ եղեք:

Միայնակ մնացած խմբագիրը ուրախ ծիծաղեց.

— Վերջապե՛ս,— ասաց նա,— կունենամ իսկական արկածային եւ եւ միաժամանակ լիովին գեղարվեստական ստեղծագործություն:

Կատեգորիա: Արձակ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՈՍԿՐՈՏ ՈՏՔԸ

Շատ դժվար է կնոջ սիրտը նվաճելը:

Եվ ինչեր ասես որ չես անում այդ ծրագիրը իրականացնելու համար: Ե՛վ ձեռքն ես բռնում, եւ՛ կրծքային ձայնով ես խոսում, եւ՛ աչքերդ չես հեռացնում նրանից:

Բայց ոչինչ չի օգնում: Դե, չեն սիրում քեզ, չեն հավատում:

Եվ ամեն ինչ պետք է նորից սկսել՝ սկզբից: Ազնիվ խոսք, իսկական տաժանակիր աշխատանք է աստղերի ու լուսնի ներկայությամբ:

Մոսկվայից Օդեսա եկավ հանգստանալու մի երիտասարդ բժիշկ:

Երբ կյանքում առաջին անգամ նա երկու ազատ շաբաթ ունեցավ, հանկարծ նկատեց, որ աշխարհը գեղեցիկ է, եւ որ նրա բնակչությունն էլ է գեղեցիկ, հատկապես կանայք: Եվ նա զգաց, որ եթե հենց հիմա վճռական միջոցների չդիմի, ուրեմն ամբողջ կյանքում երջանիկ չի լինելու եւ որպես նեխած ամուրի կմեռնի սենյակում ընկած, որտեղ մահճակալի տակ թափված կլինեն հին գուլպաներ եւ շշեր:

Մի քանի օր անց երիտասարդ բժիշկը զբոսնում էր մի աղջկա հետ խիստ կտրտված տեղանքով, ծովի ափին:

Նա ամեն կերպ ջանում էր դուր գալ աղջկան: Իհարկե, խոսում էր կրծքային կրքոտ ձայնով, իհարկե, դուրս էր տալիս ամեն հիմարություն, նույնիսկ խաբում էր, թե ինքը չելյուսկինցի է եւ Օտտո Յուլեւիչ Շմիդտի լավագույն բարեկամը: Նա առաջարկեց աղջկան իր ձեռքը, Մոսկվայում ունեցած սենյակը, սիրտը, առանձին խոհանոցը եւ շոգեջեռուցումը: Աղջիկը մտածեց եւ համաձայնվեց:

Այստեղ բաց է թողնվում ութ էջ, որոնք գեղարվեստորեն նկարագրում են բժշկի ճամփորդությունը սիրած էակի հետ կոշտ վագոնով: (Կցվում է միայն «Ավելի լավ է սիրածիդ հետ կոշտ վագոնով, քան թե միայնակ՝ միջազգայինով« ասացվածքը):

Իսկ Մոսկվայում գնեցին յասամանի մի ճյուղ եւ գնացին Զագս՝ սեփական երջանկությունը գրանցելու:

Հայտնի է, թե ինչ բան է Զագսը: Ո՛չ այնքան մաքուր, ո՛չ այնքան լուսավոր եւ ո՛չ էլ այնքան ուրախ, որովհետեւ ամուսնությունը, մահը եւ ծնունդը գրանցվում են մի սենյակում: Երբ բժիշկը դեմքին ժպիտ նկարած կնոջ հետ Զագս մտավ, իսկույն պատին նկատեց մի նախատող պլակատ՝

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՄԲՈՒՅՐԸ ՎԱՐԱԿ Է ՏԱՐԱԾՈՒՄ

Պատից կախված էին նաեւ թաղման բյուրոյի հասցեն եւ մի գրավիչ նկար, որտեղ պատկերված էին միկրոբներ՝ հազար անգամ մեծացրած գունատ սպիրոխետներ, առույգ գոնոկոկներ եւ Կոխի ցուպիկներ: Պսակադրման հրաշալի՜ անկյուն...

Անկյունում կանգնած էր ոտափաթաթանի նման կեղտոտ մի արհեստական արմավենի՝ կանաչ տակառիկի մեջ: Դա ժամանակի տուրքն էր, այսպես ասած՝ բաժանմունքների կանաչապատումը: Այդպիսի բաների մասին երեկոյան թերթը հազիվ թաքցրած հրճվանքով գրում էր «Սուխումին՝ Մոսկվայում», «Զագսերը նոր զգեստ են հագել»:

Զագսի ծառայողը զննեց երիտասարդ զույգի փաստատղթերը եւ անսպասելիորեն վերադարձրեց տերերին:
— Ձեզ չի կարելի գրանցել:

— Այսինքն ինչպե՞ս թե չի կարելի, — անհանգստացավ բժիշկը:

— Չի կարելի, որովհետեւ ձեր ընկերուհու անձնագիրը տրված է Օդեսայում, իսկ մենք գրանցում ենք միայն Մոսկովյան անձնագրերով:

— Ուրեմն ի՞նչ անեմ:

— Չգիտեմ, քաղաքացի: Ուրիշ քաղաքների անձնագրերով մենք չենք գրանցում:

— Ուրեմն ես իրավունք չունե՞մ սիրելու այլ քաղաքի մի աղջկա:

— Մի՛ բղավեք: Եթե բոլորն էլ բղավեն...

— Ես չեմ բղավում, բայց փաստորեն դուրս է գալիս, որ իրավունք ունեմ ամուսնանալու միայն Մոսկվայի աղջկա հետ: Ի՞նչ կցումներ կարող են լինել սիրո հարցում:

— Մենք սիրո հարցերով չենք զբաղվում, քաղաքացի: Մենք գրանցում ենք ամուսնությունները:

— Բայց ձեր ի՞նչ գործն է, թե ով է ինձ դուր գալիս: Դուք, ինչ է, մարդկային երջանկության բաշխիչ կայա՞ն եք այստեղ սարքել: Հոգու շարժո՞ւմն եք կարգավորում:

— Եկեք չխոսենք շարժումը կարգավորելու մասին:

— Դուք տրորում եք սիրո ծաղիկները,— ճչաց բժիշկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Իսկ դուք այստեղ խուլիգանություն մի արեք:

— Իսկ ես ձեզ ասում եմ, որ դուք տրորում եք:

— Իսկ դուք մի խախտեք կարգը:

— Ե՞ս եմ խախտում կարգը: Ուրեմն սերն այլեւս մեծ զգացում չէ, այլ միայն կարգի խախտո՞ւմ: Գնանք այստեղից, Լուսյա:

Հայտնվելով փողոցում, ամուսնու ձախորդ թեկնածուն երկար ժամանակ չէր հանգստանում:

— Մի՞թե սրանք մարդիկ են: Մի՞թե սա մարդ է: Սա հենց հեքիաթի չար վհուկն է, ոսկրոտ ոտքը: Ի՞նչ պիտի անենք հիմա:

Նա այնպես էր հուզվում, որ աղջիկը խղճաց նրան:

— Գիտե՞ս ինչ,— ասաց նա,— դու ինձ սիրում ես, ես էլ քեզ եմ սիրում: Դու սուտ ճգնավոր չես, ես էլ սուտ ճգնավոր չեմ: Արի ապրենք հենց այնպես:

Եվ իսկապես, եթե լավ մտածես, սիրելուդ հետ քողտիկում էլ դրախտ է:

Սկսեցին ապրել «այնպես»:

Բայց, ընկերներ, սիրելու հետ դրախտը քողտիկում հնարավոր է միայն այն դեպքում, եթե սիրելիդ քողտիկում գրանցված է եւ գրանցումը հաստատված է քողտիկային վարչության քողտիկային գրքում: Հակառակ դեպքում հնարավոր են բավականին մռայլ տեսարաններ:

Սիրելուդ չեն գրանցում քո տանը, որովհետեւ նա Մոսկվայի անձնագիր չունի: Իսկ Մոսկվայի անձնագիր նա կարող է ստանալ որպես բժշկի կին: Նա, իհարկե բժշկի կինն է: Բայց Զագսը նրան որպես բժշկի կին կարող է ընդունել միայն այն դեպքում, երբ նա ներկայացնի Մոսկվայի անձնագիրը: Իսկ Մոսկվայի անձնագիր նրան չեն տալիս այն պատճառով, որ նրա ամուսնությունը Զագսում գրանցված չէ: Իսկ ապրել Մոսկվայում առանց գրանցվելու՝ չի կարելի: Իսկ...

Այսպիսով դրախտը քողտիկում մյուս պրը վերածվեց դժողքի: Լուսյան լաց էր լինում եւ ցնցվում դռան յուրաքանչյուր թակոցից՝ մեկ էլ տեսար հայտնվեցին բրդոտ դռնապանները եւ նրան հանեցին քողտիկից:

Բժիշկն այլեւս աշխատանքի չէր գնում: Օտտո Յուլեւիչ Շմիդտի «լավագույն բարեկամը» իրենից ներկայացնում էր մի խղճուկ պատկեր: Նա սափրված չէր, աչքերը փայլում էին՝ ինչպես շան աչքեր: Ո՜ւր եք սեւծովյան տաքո՜ւկ գիշերներ, ահռելի՜ լուսին եւ առաջին երջանկություն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ի վերջո նա բռնեց Լուսյայի ձեռքը եւ նրան տարավ միլիցիա:

— Ահա՛,— ասաց նա, մատնացույց անելով իր կնոջը:

— Ի՞նչն ահա,— հարցրեց գործավարը՝ ուղղելով գլխի թաղիքո սաղավարտը:

— Սիրած էակս:

— Է, հետո՞ ինչ:

— Ես պաշտում եմ այս էակին եւ խնդրում եմ նրան գրանցել իմ բնակ. տարածությունում:

Ծանր տեսարանը կրկնվեց:

— Էլի ի՞նչ ապացույցներ են ձեզ հարկավոր,— իրեն կորցրած բղավում էր բժիշկը:— Ահա, ես նրան շատ եմ սիրում: Ազնիվ խոսք, առանց նրա ապրել չեմ կարող: Եվ եթե ուզում եք, կարող եմ նրան համբուրել:

Երիտասարդ զույգը, շողոքորթ հայացքը չկտրելով գործավարից, դողացող շուրթերով համբուրվեց: Միլիցիայում լռություն տիրեց: Գործավարը ամոթխածությամբ շրջվեց ու ասաց.

— Գուցե ձեր ամուսնությունը կե՞ղծ է: Գուցե ընկերուհին պարզապես ուզում է Մոսկվայում ապրել:

— Իսկ գուցե կեղծ չէ,— տնքաց «երջանիկ» ամուսինը,— այդ մասին մտածե՞լ եք: Այ, դուք ձշրված ապակու համար տուգանք եք վերցնում, իսկ ես ո՞ւմ տուգանեմ իմ փշրված կյանքի համար:

Ինչեւիցե, բժիշկը բարձր ձայնանիշ վերցրեց եւ պահեց այնքան ժամանակ, մինչեւ պարզեց, որ դեռ հնարավոր է երջանիկ լինել, որ դեռ ելք կա: Բավական է գնալ այնտեղ, որտեղ աղջիկն է ապրում, անցնել մի հազար չորս հարյուր տասնհինգ կիլոմետր, այսինքն հասնել Օդեսա, եւ ամեն ինչ կուղղվի: Օդեսայի Զագսը Մոսկվայի անձնագրով կգրանցի բժշկի հույզերը, եւ հանցագործ սերը վերջապես օրինականացված տեսք կընդունի:

Դե ի՞նչ արած, սերը միշտ էլ զոհ է պահանջում: Բժիշկը ստիպված զոհողությունների դիմեց, դրամ պարտք վերցրեց տոմսեր գնելու համար եւ լրացուցիչ արձակուրդ խնդրեց՝ ընտանեկան գործերը կարգավորելու նպատակով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց բժիշկը դեռ ծանոթ չէր ամենասարսափելիին, դեռ չգիտեր, որ ոսկրոտ ոտքը նստած է ոչ միայն Զագսում, որ ոսկրոտ ոտքերը նրան դարանակալել են երկաթուղային կայարանում:

Այստեղ բաց է թողնվում տասնվեց էջ դրամատիկ նկարագրություն այն մասին, թե երիտասարդ ամուսինները ինչպես ուշացան գնացքից: Կամ, ավելի ճիշտ, ի՞նչ նկարագրես: Բոլորին հայտնի է, որ Մոսկվայում ավելի հեշտ բան չկա, քան որեւէ տեղից ուշանալը:

Իր թշվառ Լուսյային նստեցնելով ճամպրուկի վրա բժիշկը վազեց տոմսերը վերահաստատելու: Այդ ավանտյուրան նրան չհաջողվեց: Երկաթգծի վարչությունը, որ զգոն պահպանում է երկաթուղու շահերը, մերժեց վերահաստատել տոմսերը:

— Հիմա ի՞նչ անենք,— ապշեց բժիշկը:

— Ձեր տոմսերը կորել են,— հայտնեց ոսկրոտ ոտքը,— կարգն այդպես է: Ուշացել եք, ուրեմն կորել է:

— Իսկ ի՞նչ է, մենք դիտմա՞մբ ենք ուշացել:

— Մենք ի՞նչ իմանանք դիտմամբ եք ուշացել, թե պատահական:

— Բայց չէ՞ որ միշտ վերահաստատել են:

— Հիմա ուրիշ է կարգը, քաղաքացի՛:

— Եվ վերջապես ես այլեւս դրամ չունեմ: Ես չեմ կարող ուղեւորվել:

Ոսկրոտ ոտքը քաղաքավարությամբ լեց:

Եվ այն մարդը, որ մի շարք հանգիստ հիմնարկների խանգարում էր հանգիստ աշխատել, օրորվելով ետ դարձավ եւ նստելով իր Լուսյայի կողքին, սկսեց դառը մտորել:

«Դե լավ, ախր ի՞նչ վատ բան եմ արել: Դե, արձակուրդ եմ գնացել: Դե, հանդիպել եմ մի լավ աղջկա: Դե, սիրել եմ նրան ամբողջ հոգով: Դե, նա էլ ինձ է սիրել ամբողջ հոգով: Դե, ուզեցել ենք ամուսնանալ: Եվ պատկերացնո՞ւմ եք, չի ստացվում: Որոշումները խանգարում են»:

Եթե որեւէ որոշում է ընդունվում, որից սովետական մարդիկ կյանքում իրենց հարմար չեն զգում, եթե անմիտ որոշում է ընդունվում, որը կարեւոր եւ անհրաժեշտ է միայն գրասենյակային սեղանի վրա, թանաքամանի կողքին, եւ ոչ թե կենդանի մարդկանց համար, կարելի է չկասկածել, որ այն ստեղծել է ոսկրոտ ոտքը, մի մարդ, որը կյանքը պատկերացնում է միայն մի կողմով, եւ չգիտե նրա ո՛չ խորությունը, ո՛չ ծավալը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եթե հիմնարկային արգելապատի ետեւում նստած է հիմար, վտանգավոր որոշում կատարող մի մարդ եւ եթե իմանալով այդ մասին, արդարանում է նրանով, թե ինքը փոքր մարդ է, ուրեմն՝ նա էլ է ոսկրոտ ոտք: Եթե նա տեսնում է, որ որոշման կիրառումը բերում է անհարմարություն եւ վիշտ, նա առաջինը ինքը պետք է հարց բարձրացնի, որպեսզի այդ որոշումը փոխվի, վերանայվի, բարելավվի:

Իսկ բժի՞շկը: Ո՞ւր գնաց սիրելի, ազնիվ բժիշկը: Ո՞վ գիտե: Գուցե ինչ-որ տեղեկանքի համար դեռ վազում է ոսկրոտ ոտքի մոտ, որպեսզի ձեռակերպի իր ձգձգված հարսանիքը: Կամ երեւի այլեւս չի վազում, հոգնել է եւ թափ տվել ձեռքը ամեն ինչի վրա: Կամ գուցե հավատարիմ Լուսյան մթերումների ինչ-որ լիազորի հետ փախել է Սիզրան կամ Ակյուբինսկ, որտեղ ավելի հե՞շտ է ամուսնանալը:

Համենայն դեպս բժիշկը սխալվել էր հենց սկզբում:

Նախքան աղջկան «ես քեզ սիրում եմ» շշնջալը հարկավոր էր վճռական եւ չոր պահանջել՝ «Ընկերուհի, ներկայացրեք ձեր փաստաթղթերը»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գեղարվեստական թատրոնի ծխարանում, ընդմիջմանը հանդիպեցին երկու մարդ: Սզբում նրանք հեռվից նայում էին միմյանց ինչ-որ բան կռահելով, հետո նրանցից մեկը մի մեծ շրջապտույտ գծեց՝ մյուսին կողքից դիտելու համար եւ վերջապես երկուսն էլ իրար մոտ վազեցին անկանոն բացականչություններով, որոնցից ամենաօրիգինալը «Քանի՛ ամառ, քանի՛ ձմեռ է անցել» խոսքերն էին:

Երեք րոպե տեւեց այն հարցի քննարկումը, թե որքան ջուր է հոսել տասնհինգ տարում եւ ապա «այո, եղբա՛յր», այ, թե ինչպիսի բաներ, եղբա՛յր», «իսկ դու, եղբա՛յր, ծերացել ես», «դու Է՛լ, եղբա՛յր» արտահայտությունները:

Հետո սկսեցին զրուցել:

— Ուրեմն դու զինվորական գծո՞վ գնացիր:

— Վաղո՛ւց:

— Կենտրոնո՞ւմ:

—Ոչ, այսօր եմ եկել Հեռավոր Արեւելքից:

— Իսկ ճապոնացիներն ի՞նչ են անում: Կռվե՞լ են ուզում:

— Հա, ինչ-որ բաներ են նախապատրաստում:

— Այդպես, այդպես: Այդ ի՞նչ է, քո ուսադիրների նշանները ոնց որ թե քիչ են: Ո՞նց են կոչվում դրանք:

— Ուղղանկյունիներ:

— Երեք ուղղանկյունի: Ահա թե ինչ: Իսկ շեղանկյունիներ չկա՞ն:

— Չէ, շեղանկյունիներ չկան:

— Իսկ երեք ուղանկյունին ի՞նչ կոչում է:

— Գնդի հրամանատարի:

— Կարծես շատ չէ, ծերո՛ւկ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ինչո՞ւ շատ չէ: Կարմիր բանակում գունդ ղեկավարելը պատվավոր է: Գունդը խոշոր ստորաբաժանում է: Իսկ որքան պետք եղավ սովորել: Հիշո՞ւմ ես, ես ու դու նույնիսկ թվաբանություն չգիտեինք: Ես այդ ամբողջ տասնհինգ տարին սովորել եմ: Զինվորական դպրոցն ավարտելուց հետո դասակի հրամանատար էի, հետո դարձա վաշտի հրամանատար: Երբ արդեն գումարտակի հրամանատար էի, ընդունվեցի «Կրակոց» դպրոցը: Հիմա գնդի հրամանատար եմ: Բարդ գործ է: Անցյալ տարի մասնակցեցի նաեւ մոտորացման եւ մեխանիզացման դասընթացներին: Հիմա էլ եմ սովորում:

— Իսկ շեղանկյունիներ այնուամենայնիվ չունես:

— Չունեմ, չէ: Իսկ դու ի՞նչ գծով ես աշխատում, Կոստյա:

— Ես, Լյոնյա, ուրիշ գծով:

— Այսի՞նքն:

— Ես պատասխանատու աշխատող եմ, Լյոնյա:

— Ահա թե ինչ: Իսկ ի՞նչ գծով...

— Պատասխանատու աշխատող եմ:

— Դե ես էլ հարցնում եմ՝ ի՞նչ գծով:

— Ես էլ քեզ պատասխանում եմ՝ պատասխանատու աշխատող եմ:

— Ինչի՞ աշխատող:

— Ի՞նչը ինչի:

— Դե, հարցնում եմ, ի՞նչ մասնագիտություն ունես:

— Մասնագիտությունն ի՞նչ գործ ունի այստեղ: Ազնիվ խոսք, ոնց որ խուլ ու համրի հետ խոսես: Ես, աղավնյակս, մի ամբողջ հիմնարկի գլխավոր եմ: Եթե զինվորավարի հաշվես՝ ուրեմն դա երկու-երեք շեղանկյունի է, ոչ պակաս:

— Իսկ ի՞նչ հիմնարկի:

— Շինարարական տրեստի դիրեկտոր եմ:

— Այ դա լավ է: Իսկ դու ինչ է, ճարտարապե՞տ ես հիմա, Արվեստների ակադեմիայո՞ւմ ես սովորել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Սովորե՞լ, իսկ այդ ե՞րբ: Իսկ ո՞վ պետք է աշխատի: Ես իսկի «Պրավդա» կարդալու ժամանակ չունեմ, ուր մնաց թե սովորեմ: Սովորելն, իհարկե, շատ լավ բան է, այդ մասին Ստալինն էլ է ասել: Սակայն եթե բոլորն սկսեն սովորել, էլ ո՞վ պետք է գործ անի: Դե գնանք դահլիճ, միայն մենք ենք մնացել:

Հաջորդ ընդմիջմանը զրույցը վերսկսվեց:

— Ուրեմն դու սովորել, ավարտել ես, բայց այնուամենայնիվ շեղանկյուններ չունես, հա՞:

— Չունեմ: Բայց դու ինձ հետեւյալն ասա, Կոստյա, եթե դու ճարտարապետ չես, ուրեմն հավանաբար պրակտիկ մեծ փորձ ունես:

— Շատ մեծ փորձ:

— Եվ ասենք, եթե քեզ ինչ-որ շենքի նախագիծ են բերում, դու իհարկե, կարողանում ես այն կարդալ: Կարողանում ես, չէ՞, ստուգել հաշվումները եը այլն:

—Իսկ ինչո՞ւ: Դրա համար ես ճարտարապետներ ունեմ: Ինչ է, ես նրանց ձրի՞ պետք է պահեմ: Եթե ես պիտի ամբողջ օրը նախագծերը քրքրեմ, էլ ո՞վ պետք է գործ անի:

— Ուրեմն դու քեզ վրա ես վերցրել ֆինանսակա՞ն կողմը:

— Ի՞նչ ֆինանսական կողմ: Իսկ ինչո՞ւ պետք է ես հանկարծ ամեն տեսակ մանրուքով ինձ ծանրաբեռնեմ: Դրա համար տնտեսագետներ կան, հաշվապահ կա: Այնտեղ, եղբա՛յր, գիշեր-ցերեկ կալկուլացիա են կատարում: Ես նույնիսկ մի պրոֆեսոր եմ պահում:

— Իսկ եթե քո այդ կալկուլատորները քեզ խաբե՞ն որեւէ հարցում:

— Ո՞վ պետք է ինձ խաբի:

— Հանկարծ ու խաբեն: Չէ՞ որ դու մասնագետ չես:

— Իսկ բնաազդը՞...

— Ի՞նչ բնազդ:

— Դե, դու էլ ի՞նչ ես քեզ հիմար ձեւացնում, սովորական բնազդն էլի: Ես առանց որեւէ գիտության էլ ամեն ինչ մինչեւ ուղն ու ծուծը տեսնում եմ:

— Իսկ դու ինչո՞վ ես զբաղվում հիմնարկում, երեւի շինանյութերով, հա՞: Բավականին հետաքրքիր բնագավառ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ես քո այդ շինանյութերից ոչինչ էլ չեմ հասկանում:

— Սպասիր,— բա դու ասում էիր, թե վիթխարի փորձ ունես:

— Ավելի քան վիթխարի: Ախր ես ընդամենը կես տարի է, ինչ այս պաշտոնին եմ: Սրանից առաջ Մարզկաթում էի...

— Դե, սկզբից էլ ասեիր, որ կաթնային տնտեսության մասնագետ ես էլի:

— Այո, խոզն ու կովը իրարից տարբերում եմ: Ուրեմն Մարզկաթում երեք ամիս եղա, դրանից առաջ ուտիլսրյոյում էի: Ավելի առաջ երաժշտական տեխնիկում էի ղեկավարում, արիմիութենական աշխատանք էլ եմ կատարել, ծառայել եմ Կարմիր խաչում եւ Կարմիր մահիկում, ղեկավարել եմ անագ որոնողների արշավանքները, երկու ամիս, ախպերս, մի ամբողջ բանկ եմ ձեռքիս խաղացրել, եղել եմ Կուրուպրում, Վուկոպսպիլկի բաժանմունքում, եւ բացի դրանից ամենապակասը մի տասը պոստում: Հիմա ես պարզապես բոլորը չեմ հիշում:

Գնդի հրամանատարը փոքր-ինչ շփոթվեց:

— Չեմ հասկանում, ի վերջո ո՞րն է քո հիմնական մասնագիտությունը:

— Չհասկանալու ի՞նչ կա: Ընդհանուր ղեկավարություն եմ իրականացնում:

— Այո՛, այո՛, ընդհանուր ղեկավարություն... Ես դա հասկանում եմ, բայց ախր մասնագիտությունը... Ո՞նց քեզ բացատրեմ... Հիշո՞ւմ ես, տասնըհինգ տարի առաջ ես քիչ ու միչ փականագործ էի, իսկ դու էլ էլեկտրամանյուրությամբ էիր զբաղվում: Իսկ հիմա ո՞րն է քո մասնագիտությունը:

— Խենթուկ— ես հենց սկզբից ասացի: Պատասխանատու աշխատող եմ: Այ, Սաշա Զայցեւը սովորում էր, սովորում, իսկ այդ ժամանակամիջոցում ես նրանից առաջ անցա: Մեծամասնությունը սովորում է, իսկ ես ոչի՛նչ, յոլա եմ գնում, նույնիսկ կարիրրա եմ ձեռք բերել:

— Եղավ,— ասաց հրամանատարը,— հիմա հասկանալի է: Կարիերա...

— Հա՛,— շշնջաց հանկարծ տրեստի գլխավորը, խորհրդավորությամբ շուրջը նայելով,— մի նորություն կա: Այսինքն, իհարկե, դեռ չկա, բայց կլինի: Հասկանո՞ւմ ես, բախտի բերմամբ կարծես լավ ժամանակ եմ այս հիմնարկն ընկել: Օրերս լրանում է մեր տրեստի ստեղծման տասը տարին եւ ասում են, պարգեւատրումներ են լինելու: Չի կարող պատահել, որ բոլորին պարգեւատրեն, իսկ դիրեկտորին՝ ոչ: Ի՞նչ ես կարծում, Լյոնյա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դահլիճ գնալու ժամանակն է,— անհամբերությամբ ասաց հրամանատարը:

— Այ, դու զինվորական ես,— շարունակեց Կոստյան,—բայց շքանշաններ չունես: Դա լավ չէ:

— Ես շքանշաններ ունեմ:

— Դե, լա՛վ, որտեղի՞ց:

— Հենց այնպես: Մի գործի մասնակցելու համար, չինական կոնֆլիկտին:

— Այնտեղ տալի՞ս էին,— իրար անցավ Կոստյան:

— Այնտեղ կրակում էին,—չորությամբ պատասխանեց հրամանատարը:

— Բա ինչո՞ւ չես կրում:

— Իսկ ինչի՞ պիտի ես դրանք թատրոն բերեմ:

— Խելքդ թռցրե՞լ ես ինչ է: Բա էլ որտե՞ղ: Հենց թատրոն պետք է բերել, որ բոլորն էլ տեսնեն: Ա՛խ դու կռվող: Իսկ որտե՞ղ ես պահում:

— Տուփի մեջ:

— Իսկական տեղը գտել ես: Դե, լավ, չորրորդ գործողությունը կարելի է չնայել, անհետաքրքիր է: Գնում ենք մեր տուն: Ես, եղբա՛յրս, այնպիսի մի կին ունեմ՝ գեղեցկուհի: Նայելու բան շատ կա: Կընթրենք, հետո դեսից-դենից... գրամաֆոնը կլարենք...

— Ինչ կա որ, հետաքրքիր է:

— Գնանք, գնանք, ես, եղբա՛յրս, տանը լրիվ կոմպլեկտ ունեմ:

Եվ իսկապես, պարզվեց, որ նրա տանը մոտ երեսունհինգ տարեկան տարեց երեխայի խաղալիքների, այսպես ասած, լրիվ կոմպլեկտ կար՝ նվագարկիչ՝ լեհական տանգոյով, ռադիո՝ ուժեղացուցիչով, «Լեյկա» լուսանկարչական ապարատ՝ հինգ օբյեկտիվներով, վեց եռոտանիներով եւ երկու խոշորացույցներով: Կինը դեռ չկար:

— Հիանալի լուսանկարչական ապարատ ունես, — ասաց հրամանատարը,— երեւի շատ գեղեցիկ նկարներ ես հանում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Չէ, ջանմ— պատասխանեց Կոստյան պահարանի մոտից,— ես ի՞նչ լուսանկարիչ եմ: Եթե ճիշտն ասեմ, դրանով զբաղվելու ժամանակ էլ չունեմ:

— Ափսո՛ս, ափսո՛ս, դե այդ դեպքում ռադիոն միացրու: Ոնց որ ԷԿ—4 է, չէ՞: Դա կարծեմ ամբողջ աշխարհն է բռնում: Հետաքրքիր է լսելը:

Կոստյան էլեկտրական խրոցը միացրեց խցանիկին եւ պտտեցրեց բռնակներից մեկը: Հնչեց մի զզվելի մլավոց: Կոստյան արագորեն անջատեց ռադիոն:

— Գիտե՞ս ինչ, ես այս գործի մասնագետ չեմ: Հարեւան բնակարանից մեզ մոտ մի տղա է գալիս, անունը Վովա է: Ութ տարեկան է ավազակը, բայց բոլոր կայաններն էլ հիանալի որսում է:

— Ինչ արած,— հառաչեց հրամանատարը,— գոնե գրամաֆոնը լարի:

— Գուցե կնո՞ջս սպասենք, նա է գրամաֆոնի մասնագետը:վԱյսինքն կարելի է նաեւ լարել:

Պատասխանատու Կոստյան անցավ գրամաֆոնին:

— Այո, եղբայր,— ասում էր նա՝ մտախոհ պտտելով լծակը,— ամեն ինչ ունեմ. բնակարան, ռադիո, «Լեյկա», գեղեցկուհի կին... Միայն այ շքանշան չունեմ: Այ, եթե մի շքանշան...

Այդ ժամանակ լսվեց կարճ, բայց սարսռնեցնող մի ճայթյուն:

— Հենց այդ է որ կա,— զարմացավ Կոստյան,— լարը կտրվեց: Ախր ասում էի՝ սպասենք կնոջս: Ափսո՛ս: Լավ գրամաֆոն էր՝ իմպորտ էր կամ էքսպորտ: Բա հիմա ի՞նչ անենք: Գուցե ընթրե՞նք...

Եվ ձեռքերը շփելով նա մոտեցավ սեղանին: Հենց այդ ժամանակ էլ անսպասելիորեն հանգավ լույսը:

— Սա՞ ինչ բան էր,— մթության մեջ հնչեց Կոստյայի ձայնը,— հիմա առանց լույսի պիտի նստենք:

— Իսկ ինչո՞ւ առանց լույսի,— վրդովված ասաց հրամանատարը,— հասարակ բան է՝ խցանն է այրվել: Վերցրու եւ նորոգիր: Մի ժամանակ էլեկտրամանտյոր էիր, չէ՞:

— Ինչ ես խոսում, ես արդեն ամեն ինչ մոռացել եմ՝ որն է անոդը, որն է կատոդը: Չէ՛, հարկավոր է մասնագետ կանչել:

Նա դեռ երկար տնքում էր մթության մեջ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբ լույսը վառվեց, հրամանատարն այլեւս չկար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խմբագիր՝ Հ. Հ. Դանիելյան

Շեւավորումը՝ Ա. Բոյաջյանի եւ Ե. Գրիգորյանի

Գեղ. խմբագիր՝ Վ. Մանդակունի

Տեխ. խմբագիր՝ Վ. Եգանյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Աբրահամյան

Պատվեր 1239

Տիրաժ 15000

Հանձնված է արտադրության 25/111—1963 թ.։

Ստորագրված է տպագրության 14/X—1963 թ.։

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների եւ պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երեւան, Ալավերդյան փող. № 65։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org